

## Կ Ա Ր Գ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԼՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Ազգային հանձնաժողով) անդամի թափուր պաշտոն գրադեցնելու համար մրցույթ անցկացնելու, մրցույթին մասնակցելու, մրցույթային հանձնաժողովի աշխատանքների իրականացման պայմանները:

2. Մրցույթի անցկացման հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է Երևան, Մարշալ Բաղրամյան 26 հասցեում:

3. Մրցույթի անցկացման հանձնաժողովի գործունեության հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի միջոցների հաշվին:

4. Մրցույթի անցկացման հանձնաժողովի տեղեկատվական և տեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը:

#### II. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Խորհրդի կամ Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի նախագահը կամ Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին գրավոր տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության Նախագահին: Խորհրդի կամ Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի վերաբերյալ գրավոր տեղեկատվությունն ստացվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում զանգվածային լրատվության միջոցներով («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում, Հանրային հեռուստատեսությամբ) հայտարարվում է թափուր տեղի համալրման համար մրցույթ:

Հայտարարության մեջ նշվում են հետևյալ տեղեկությունները՝

- 1) թափուր պաշտոնի անվանումը,
- 2) թափուր պաշտոնին ներկայացվող պահանջները,

3) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու վայրը, ժամկետը, մրցույթի անցկացման վերջին օրը և ժամը,

4) սույն կարգի պաշտոնապես հրապարակված տեքստը պարունակող՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի համարը (տվյալները):

6. Խորհրդի անդամի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով լրագրության, իրավագիտության, հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի և արվեստի գործիչ, հեղինակավոր և որակյալ մասնագետ է, ունի բարձրագույն կրթություն և տիրապետում է հայոց լեզվին:

7. Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի լրագրության, հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսության, կառավարման, տեխնիկայի, մշակույթի, արվեստի, գիտության և իրավագիտության, կրոնի բնագավառներում մասնագիտական աշխատանքային փորձ, բարձրագույն կրթություն, հասարակության լայն շրջանում՝ հեղինակություն ու վստահություն և տիրապետում է հայոց լեզվին:

8. Խորհրդի և Ազգային հանձնաժողովի անդամների նկատմամբ սահմանափակումները սահմանվում են օրենքով:

9. Խորհրդի կամ Ազգային հանձնաժողովի անդամի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպում և անցկացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից այդ նպատակով ստեղծվող ժամանակավոր հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Խորհրդի կամ Ազգային հանձնաժողովի անդամի (անդամների) թափուր պաշտոնում (պաշտոններում) նշանակմանը հաջորդող երրորդ օրը:

Մինևս սույն հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է նաև Խորհրդի կամ Ազգային հանձնաժողովի մեկից ավելի անդամների թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները, եթե դրանք անցկացվելու են հանձնաժողովի գործունեության ընթացքում:

10. Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքում, երբ դրան մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

11. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել (չկայացած մրցույթ), կամ մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել, ապա անցկացվում է կրկնակի մրցույթ: Կրկնակի մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը տալիս է հանձնաժողովը:

12. Կրկնակի մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն կարգին համապատասխան:

13. Կրկնակի մրցույթը չկայանալու կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստեղծվում է նոր հանձնաժողով, որը կազմակերպում և անցկացնում է Խորհրդի կամ

Ազգային հանձնաժողովի անդամի (անդամների) թափուր պաշտոն (պաշտոններ) զբաղեցնելու համար մրցույթը: Գործող հանձնաժողովի գործունեությունը դադարում է նոր հանձնաժողովի ստեղծման օրվանից:

14. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում,

2) անձնագրի պատճեն,

3) բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթղթի պատճեն,

4) ինքնակենսագրություն (մանրամասն),

5) աշխատանքային գրքույկի պատճեն կամ քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված (հաստատված),

6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը),

7) 2 լուսանկար՝ 3x4 չափսի:

Փաստաթղթերը ներկայացվում են հանձնաժողով մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցներով հայտարարմանը հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից չեն ընդունվում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են հանձնաժողովի քարտուղարին:

15. Հանձնաժողովը Խորհրդի կամ Ազգային հանձնաժողովի անդամի թեկնածու (թեկնածուներ) ընտրելու մասին որոշումը կայացնում է մրցույթի մասնակիցների փաստաթղթերն ընդունելու վերջին օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում:

16. Հանձնաժողովը, ուսումնասիրելով մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը, որոշում է մրցույթի հաղթողին (հաղթողներին): Անհրաժեշտության դեպքում, մինչև մրցույթի հաղթողի (հաղթողների) վերաբերյալ որոշում կայացնելը, հանձնաժողովը կարող է թեկնածուի (թեկնածուների) հետ անցկացնել հարցազրույց:

17. Հանձնաժողովը թեկնածու (թեկնածուներ) ընտրելու մասին որոշումը կայացնելուց հետո մեկ օրվա ընթացքում այն գրավոր ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ անհրաժեշտ գրավոր հիմնավորմամբ:

18. Հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից: Հանձնաժողովի անհատական կազմը՝ հանձնաժողովի նախագահ, քարտուղար, անդամներ, հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

19. Հանձնաժողովի անդամ կարող են լինել պետական մարմինների ներկայացուցիչներ, լրագրության, իրավագիտության, հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի և արվեստի գործիչներ, հեղինակավոր և որակյալ մասնագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

20. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են հանձնաժողովի նախագահի կողմից:

21. Հանձնաժողովի անդամներին մրցույթի նյութերի տրամադրման և նիստերի հրավիրման, անցկացման տեղի, ժամանակի և օրակարգի մասին իրազեկում է հանձնաժողովի քարտուղարը՝ նիստի հրավիրման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

22. Հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել խորհրդատուներ և փորձագետներ:

23. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է նրա անդամների կեսից ավելին:

24. Հանձնաժողովի որոշումների ընդունման ձևը (բաց կամ փակ քվեարկություն) որոշում է հանձնաժողովը:

25. Հանձնաժողովի որոշումներն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

26. Հանձնաժողովի անդամների ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

27. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

28. Հանձնաժողովի նախագահը՝

- հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը,
- կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները,
- ստորագրում է հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև հանձնաժողովի գործունեությանն առնչվող մյուս փաստաթղթերը,
- ներկայացնում է հանձնաժողովը պետական և ոչ պետական մարմիններում, կազմակերպություններում,
- հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին,
- ապահովում է Խորհրդի (Ազգային հանձնաժողովի) թափուր տեղի համալրման համար անցկացվող մրցույթի հայտարարման, թեկնածուների վերաբերյալ տվյալների, Խորհրդի (Ազգային հանձնաժողովի) անդամի (անդամների) նշանակման մասին տեղեկությունների հրապարակումները զանգվածային լրատվության միջոցներով,

- իրականացնում է սույն կարգով սահմանված այլ լիազորություններ:

29. Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի նիստերին մասնակցելու անհնարինության դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի քարտուղարին:

30. Հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը, արձանագրումը, ինչպես նաև ընդունված փաստաթղթերի առաքումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարը:

31. Հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելիս կարող է պետական և այլ մարմիններից, կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

32. Հանձնաժողովն իր գործառույթների ավարտին հաջորդող օրը մրցույթի կազմակերպման և անցկացման վերաբերյալ նյութերը (փաստաթղթերը) փոխանցում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ:

**ՀՀ Նախագահի աշխատակազմի  
ղեկավար**

**Կ. Կարապետյան**